



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ՅԻՇԱՏԱԿ ԵՊԻԱ ՄԱՐԳԱՐԷԻՆ 4 ՅՈՒՆԻՍ 2023

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔԷՆ

18.29-46

Կէսօրը անցաւ, եւ Բահադի մարգարէները շարունակեցին իրենց ցնորական կանչուընտուը մինչեւ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը. բայց ո՛չ մէկ ձայն:

Այն ատեն Եղիա Թեաբացի ըսաւ գարշելի այդ կուռքերու մարգարէներուն.

- Հեռացէ՛ք այլեւս, հիմա ես իմ ողջակէզս պիտի մատուցանեմ:

Եւ անոնք հեռու գացին:

Եղիա ժողովուրդին դառնալով ըսաւ. «Ինծի՛ մօտեցէ՛ք»: Եւ ամբողջ ժողովուրդը անոր մօտեցաւ: Եղիա Տիրոջ կործանած սեղանը վերականգնելու համար տասներկու քարեր առաւ, Յակոբի որդիներէն սերած ցեղերուն թիւին համաձայն, որուն Աստուած խօսած էր ըսելով. “Իսրայէլ պիտի կոչուիս”, այդ քարերով սեղան մը կանգնեց Տիրոջ անունին, եւ անոր շուրջը փոս մը փորեց, թիթեղ մը սերմնցու տանելու խորութեամբ: Ապա փայտերը սեղանին վրայ շարեց, զուարակը կտոր-կտոր ընելով փայտերուն վրայ դիզեց եւ հրամայեց.

- Չորս սափոր ջուր բերէ՛ք եւ ողջակէզին ու փայտերուն վրայ թափեցէ՛ք:

Ապա ըսաւ. «Կրկնեցէ՛ք նոյնը»: Եւ անոնք նոյն ձեւով կրկնեցին: «Երրորդ անգամ ըլլալով կրկնեցէ՛ք նոյնը», ըսաւ ան, եւ երրորդ անգամ մըն ալ այնպէս ըրին: Զուրը սեղանին շուրջ հոսեցաւ եւ լեցուց փոսը:

Երբ երեկոյեան զոհը մատուցանելու ժամը հասաւ, Եղիա մարգարէ սեղանին մօտեցաւ եւ աղօթեց աղաղակելով.

- Ո՛վ Տէր, Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը, ցո՛յց տուր այսօր թէ դո՛ւն ես Իսրայէլի Աստուածը եւ ես՝ քու ծառադ, եւ թէ քեզի համար ըրի այս բոլորը: Լսէ՛ ինծի, Տէ՛ր, պատասխանէ՛ ինծի կրակով, որպէսզի այս ժողովուրդը գիտնայ թէ դո՛ւն ես Աստուածը, ո՛վ Տէր, եւ դո՛ւն ես որ ետ քեզի կը դարձրնես իրենց սիրտը:

Այն ատեն Տէրը երկինքէն կրակ դրկեց, որ այրեց ողջակէզն ու փայտերը, քարերն ու հողը, եւ լափեց փոսին մէջ հաւաքուած ջուրը: Ասիկա տեսնելով՝ ամբողջ ժողովուրդը երեսի վրայ գետին ինկաւ, ըսելով. «Արդարեւ Տէ՛րն է Աստուածը, Տէ՛րն է Աստուածը»:

Եղիա անոնց հրամայեց. «Բռնեցէ՛ք Բահադի մարգարէները. ոեւէ մէկը ողջ չմնայ»: Եւ ժողովուրդը բռնեց զանոնք: Եղիա զանոնք Կիսոն կոչուած հեղեղատը իջեցուց եւ հոն կտորեց զանոնք:

Այնուհետեւ Եղիա Աքաաբին ըսաւ. «Գնա՛ հիմա, կե՛ր եւ խմէ՛, որովհետեւ մօտալուտ սաստիկ անձրեւի ձայն կ'առնեմ»: Աքաաբ ուտելու եւ խմելու գնաց, իսկ Եղիան Կարմեղոս լերան գագաթը բարձրացաւ, մինչեւ գետին խոնարհեցաւ ու դէմքը ծունկերուն մէջ առաւ, եւ իր ծառային ըսաւ. «Գնա՛ եւ ծովուն կողմը նայէ՛»: Պատանին գնաց նայեցաւ եւ ըսաւ. «Բան չկայ»:

- Դարձեալ գնա՛, - ըսաւ Եղիա, եւ եօթն անգամ պատանին ետ գնաց: Եօթներորդ անգամին պատանին ըսաւ.

- Ահա մարդու մը ձեռքին չափ փոքրիկ ամպ մը կ'ելլէ ծովէն:

Այն ատեն Եղիա ըսաւ.

- Գնա՛ եւ Ագաաբին ըսէ՛. “Կառքդ լծէ՛ եւ տունդ դարձիր որպէսզի անձրեւի չբռնուիս”:

Շուտով երկինքը ամպերով մթնցաւ. հով ելաւ եւ սաստիկ անձրեւ սկսաւ: Աքաաբ իր կառքը հեծաւ եւ Յեզրայէլ փութաց: Տիրոջ զօրութիւնը օգնեց Եղիայի, որ պարեգօտը մէջքին ամրացնելով վազեց եւ Աքաաբէն առաջ մտաւ Յեզրայէլ քաղաքի դռնէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ ԶՈՐՐՈՐԴ ԳԻՐՔԷՆ

2.1-15

Երբ հասաւ ժամանակը, որ Տէրը մրրիկով երկինք պիտի բարձրացնէր Եղիան, Եղիա եւ Եղիսէ Գազգաղայէն մեկնեցան: Եղիա

Եղիսէին ըսաւ.

- Հո՛ւ մնա, Տէրը զիս Բեթէլ կը ղրկէ:

Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երգնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Բեթէլ եկան: Բեթէլ բնակող մարգարէները խումբով եկան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, այդ մասին մի՛ խօսիք, - պատասխանեց Եղիսէ:

Ապա Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ւ մնա, Տէրը զիս Երիքով կը ղրկէ:

Եւ ան պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երգնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ Երիքով եկան: Երիքով բնակող մարգարէները խումբով մօտեցան Եղիսէի եւ ըսին.

- Գիտե՞ս, որ Տէրը այսօր քեզմէ պիտի առնէ Եղիան՝ քու տէրդ:

- Գիտեմ, մի՛ խօսիք այդ մասին, - պատասխանեց Եղիսէ:

Եղիա Եղիսէի ըսաւ.

- Հո՛ւ մնա, Տէրը զիս Յորդանան կը ղրկէ:

Եղիսէ պատասխանեց.

- Վկայ ըլլայ ապրող Տէրը. կ'երգնում քու կեանքովդ, թէ պիտի չթողում քեզ:

Եւ երկուքը միասին գացին: Մարգարէներու խումբէն յիսուն հոգի հետեւեցան անոնց մինչեւ Յորդանան գետ: Եղիա եւ Եղիսէ գետեզրին կանգ առին, իսկ միւսները կանգնեցան քիչ մը հեռու: Եղիա իր վերարկուն հանեց, ծալլեց զայն եւ անով զարկաւ ջուրերուն: Զուրերը այս ու այն կողմ բաժնուեցան, եւ անոնք երկուքով անցան ցամաք տեղէն: Երբ անցան, Եղիա ըսաւ.

- Եղիսէ՛, քանի գեռ հետդ եմ՝ խնդրէ՛ ինչ որ կրնամ ընել քեզի համար:

- Խնդրե՛մ. մարգարէական հոգիէդ կրկին բաժին թող ժառանգեմ, - պատասխանեց Եղիսէ:

- Դժուար բան խնդրեցիր, - ըսաւ Եղիա, - բայց պիտի ստանաս զայն, եթէ տեսնես իմ երկինք բարձրացուիլս. այլապէս պիտի չստանաս:

Եւ մինչ խօսելով կ'երթային, ահա յանկարծ հրեղէն ձիերով կառք մը իրարմէ բաժնեց Եղիան ու Եղիսէն, եւ Եղիա մորթիկով երկինք բարձրացաւ: Եղիսէ տեսաւ եւ աղաղակեց. «Հա՛յր, հա՛յր, ահա Իսրայէլի կառքն ու հեծեալները»: Եւ այլեւս չտեսաւ զայն: Ուստի քաշեց, պատռեց իր վերարկուն, զայն երկու կտորի վերածելով: Ապա վերցուց Եղիայի վերարկուն, որ իր վրայ

ինկաւ, եւ դարձաւ Յորդանան գետին եզերքը: Առաւ Եղիայի վերարկուն եւ ջուրերուն զարկաւ, բայց անոնք չբաժնուեցան: Այն ատեն գոչեց. «Ո՞ւր ես, Տէ՛ր, Եղիայի Աստուածը», եւ դարձեալ ջուրերուն զարկաւ: Զուրերը այս ու այն կողմ բաժնուեցան եւ Եղիսէ անցաւ միւս կողմ: Երբ Երիքովի մարգարէները դիմացէն տեսան զինք, ըսին. «Եղիայի հոգին Եղիսէի վրայ հանգեցաւ»: Գացին դիմաւորեցին զինք եւ մինչեւ գետին խոնարհեցան անոր առջեւ:

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

5.16-20

Չեր մեղքերը իրարու խոստովանեցէք եւ իրարու համար աղօթեցէք, որպէսզի բժշկուիք. որովհետեւ արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: Եղիա մեզի նման կիրքերու ենթակայ մարդ էր. բայց երբ աղօթեց որ անձրեւ չգայ երեքուկէս տարի չանձրեւեց երկրի վրայ: Ապա դարձեալ աղօթեց եւ երկինքը անձրեւ տեղաց ու երկիրը իր բերքը տուաւ:

Եղբայրներս, երբ ձեզմէ ոեւէ մէկը ճշմարտութեան ուղիէն մոլորի եւ ուրիշ մը յաջողի զայն վերադարձնել, գիտցէք թէ մեղաւորը իր մոլար ճամբէն դարձնողը թէ՛ անոր հոգին մահուընէ կը փրկէ եւ թէ՛ իր բազմաթիւ մեղքերուն թողութիւն կը գտնէ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

4.25-30

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.- «Զեզի օրինակներով խօսիմ: Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային Եղիայի օրերուն, երբ երեքուկէս տարի երկինքը չանձրեւեց եւ ամբողջ երկրին մէջ սաստիկ սով տիրեց: Բայց Եղիա անոնցմէ ոեւէ մէկուն չղրկուեցաւ, այլ ղրկուեցաւ Սիդոնի մօտիկ Սարեփթա գիւղը բնակող այրի կնոջ մը: Նոյնպէս, Եղիսէ մարգարէի օրերուն Իսրայէլի մէջ բազմաթիւ բորոտներ կային, բայց անոնցմէ ոչ մէկը բժշկուեցաւ, այլ միայն Նէեման անունով ասորի մը»:

Այս ականարկութիւնները լսելով՝ ժողովարանին մէջ գտնուողները բարկութեամբ լեցուեցան: Ելան, Յիսուսը քաղաքէն դուրս հանեցին եւ գահավէժ ընելու նպատակով զայն տարին մինչեւ կատարը այն լեռան, որուն վրայ շինուած էր իրենց քաղաքը: Բայց Յիսուս անոնց մէջէն անցաւ գնաց: